

Շուշանիկ Գ. Զոհրաբյան

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԱՐՎԵՍՈՒՄ\*



19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների հայ կերպարվեստի պատմության մեջ պատվագոր տեղ է գրավում Վարդգես Սուրենյանցը (1860 - 1921): Նա գեղանկարիչ էր, գրաֆիկ, թատերական նկարիչ, ճարտարապետ, արվեստի տեսաբան, քարգմանիչ: Այս բոլոր բնագավառներում Սուրենյանցը դրսևորեց իր ուրույն դեմքը, քառ անհատականությունը, ունեցավ իրեն հետաքրքրող թեմաները և օգտվեց սեփական արվեստին բնորոշ արտահայտչամիջոցներից:

Ու թեև Սուրենյանցի գիտելիքների խորությունը, բնատուր տաղանդը սեփական գաղափարների դիպուկ արտահայտման հետ միասին՝ նկարչի ստեղծագործությունները դուրս են քերում իր ժամանակի սահմաններից, սակայն նրա ապրած ժամանակն էր, որ նկարչի ուսերին դրեց ծանր ու դժվարին

խնդիր: Այն է՝ կարգավորել հայ կերպարվեստի տարերայնորեն զարգացող ընթացքը, լրացնել պակասն ու քերին, կերպարվեստի նոր արտահայտչամիջոցները հնարավորին ծառայեցնել նրա ազգային բովանդակությանը: Եվ Սուրենյանցը կարողացավ ավարտուն տեսք տալ հայ կերպարվեստի շենքին՝ արձագանքելով իր ժամանակի պահանջներին՝ ընդիհանրապես և հայ իրականության առաջադրած հիմնահարցերին՝ նաև ավարտելու:

Նկարչի ժառանգության արժեքավոր մասը կազմող կտավներից յուրաքանչյուրն իր ժամրի, ձևի, կատարման գեղագիտական ու գեղարվեստական


\* Հեղինակը Վ. Սուրենյանցի ծննդյան տարեթիվ է համարում 1860 թվականը: Սա մինչ օրս ընդունված տեսակետուն է, ինչը հիմք է տվել այս տարի նշելու նկարչի 150-ամյակը: «Վեճ»-ի նախորդ համարի «Ազող»-ում հրապարակվել է նույն տարեթիվը: Սակայն օրեք Յայաստանի Ազգային արխիվի աշխատակիցները ի թիվս Վ. Սուրենյանցին վերաբերող այլ փաստաթղթերի, հայտնաբերել են 1868 թ. մայիսի 7-ին Վրաստանի և Խնդրեթիայի Յայոց թեմական կոնվունտորիայի կողմէց ասպազմ նկարչին տրված ծննդյան վկայականը: Այդ փաստաթղթը վկայում է, որ ավագ քահանա Յակոբ Սուրենյանցի և Խսկուի Աղաքարովայի որդին՝ Վարդգեսը ծնվել է 1858 թ. փետրվարի 15-ին: Վ. Սուրենյանցի կյանքի ու գործունեության տարբեր դրվագներին վերաբերող Յայաստանի Ազգային արխիվի վավերագրերը կիրապարակվեն «Վեճ»-ի հաջորդ համարում: Խնդր:

Հոդվածն ընդունվել է տպագրության 21. 03. 2010:

արժանիքների, ինչպես նաև բարձրացրած հարցերի բովանդակությամբ նշանակալից երևոյթ է: Սուրենյանցի ստեղծագործությունը 19-րդ դարի վերջերի հայ ժողովրդի վիճակն ու հոգեբանությունը արտահայտող կուտ, ամբողջական խոսք է՝ լի անսխալ կանխատեսումներով:

Ուստի, պատահական չէ, որ այդ դարաշրջանում հայ ժողովրդին բաժին ընկած անոր տառապանքները հանդիսացել են նկարչի ստեղծագործության հիմնական թեմաները, որոնք մատուցվել են՝ մեկնաբանվելով ժամանակակցի ու ականատեսի ընկալման դիտանկյունից:

1890-ականների ընթացքում Սուրենյանցը կերտեց այնպիսի նշանակալից ու բարձրարժեք գործեր, ինչպիսիք են «Լըյալը», «Եկեղեցականների թափորք դուրս է զայս Եկեղեցոց», «Ոտնահարված սրբություն», «Զարդից հետո», «Ուրացող հայութի»<sup>1</sup>, «Պատաճի Հաֆեզը Շիրազի գեղեցկուհիներին գովերգում է Մուսելի վարդերը», «Հոփիսիմեի Եկեղեցին», «Շամիրամն Արա Գեղեցիկի դիմակի մոտ», «Անարգվածը» կտավները, պարսկական և իսպանական մոտիվներով կատարված պատկերների շարքը, Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի նկարազարդումները: Նրա այս խոր, հուզող կտավների հմայքը կարելի է համեմատել միայն մեր անցյալի հուշարձանները կերտած հանճարեղ վարպետների արվեստի հետ:



Սուրենյանցի ստեղծագործությանը բնորոշ է պատմական կամ կրոնական թեմաների միջոցով իր ապրած ժամանակի գաղափարներն ու տրամադրություններն արտահայտելը: Իր անզուգական գեղանկարչական գործերով նա դարձավ պատմական ժանրի հիմնադիրը հայ կերպարվեստում: Սուրենյանցի պատմանկաշությունն առանձնանում է ուղղակի կամ փոխաբերական, փիլիսոփայող կամ սիմվոլիկ մտածողությամբ և դրանորովում լեզենդների, հերիարների, բանահյուսական սյուժեների, ճարտարապետական հուշարձանների միջոցով: Քննելով պատմության ողբերգական հակասությունները՝ Սուրենյանցը ստեղծել է իր ժամանակի պատկերը՝ ազգային հատկանիշների, սովորությունների ու կենցաղի ֆոնի վրա: Պատմական թեման նրա համար ծառայել է որպես միջոց ու ձև՝ խոսելու, պատմելու իր ժողովրդի տառապանքների, նրա դառն անցյալի մասին: Սուրենյանցը դիմեց պատմությանը ոչ թե հանուն պատմության, այլ հանուն ներկայի, դիմեց իր օրերի մարդու մոտեցումով, իր կողքին ապրող

<sup>1</sup> Տես Նիկ. Վրզումանյան, Վարդգես Սուրենյանցի նորահայտ կտավը, «Երեկոյան Երևան», 1965, 11 մայիսի, էջ 3:

ժողովրդի խոհերից ու ձգտումներից ելնելով: Այսինքն՝ անցյալը պատկերող կտավներում էլ նա մնաց իր օրերի նկարիչը: Սուրենյանցի պատմանկարչական կտավները ոչ թե փաստագրություն են կամ անցյալի դրվագների վերատեղման փորձ, այլ նկարչի խոսքն են՝ անցյալի օրինակով և անցյալի օգնությամբ ասված: Դրանցում անցյալն ի սպաս է դրված ներկային, և առաջին հերթին՝ ժամանակի հայ իրականության համար առանցքային նշանակություն ունեցող՝ հայ ազգային - ազատագրական պայքարին:

Ապրելով ու ստեղծագործելով Մոսկվայում ու Պետերբուրգում՝ նկարիչը քարեապատեհ պայմաններ ունեցավ խորապես ներդաշնակվելու իր ժողովրդի ու նրա ձգտումների հետ և պարբերաբար աշխատելու անցյալից ու ներկայից վերցված թեմաների վրա: Սուրենյանցի ստեղծագործությունների արժեքը կարևորվում է հատկապես նրանով, որ դրանց ստեղծման տարիներին ավերվում էր հայրենի երկիրը, խարխվում էին նրա բազմադարյան հիմքերը, իսկ բնակչությունը ենթարկվում էր բնաշնչման: Ուստի, նրա կտավների բարձր գեղարվեստականությունը անխօնի լուսավեց դարձրած իրադարձանի իրադարձությունների ճշգրիտ ու խորը արտահայտման հետ:



Վ. Սուրենյանց, Լքյալը, 1894



Վ. Սուրենյանց, Ողբացող հայուհին

Ապրելով հայ ժողովիդին բաժին ընկած սոցիալական և ազգային ամենածանր փորձությունների տարիներին, նկարիչն իր արվեստում ամենից ավելի ուժգին հնչեցրեց հայ ժողովրդի ողբերգության թեման: Սակայն այդ ողբերգությունը, ինչպես Կոմիտասի անզուգական «Անտոնիոս», Սուրենյանցի «Եկայը առ իս ամենայն վաստակեալը»<sup>2</sup> պատկերում ևս երբեք չհանգեց հոռետեսաւրյան: Այս նկարում պատկերված վիրավոր, հարստահարված ու տնավեր եղած հայ շինականները դեռևս իրենց հույսը չեն կորցրել, այլ փրկություն


2 Նկարիչը «Եկայը առ իս ամենայն վաստակեալը»-ի նախնական էսքիզն արել է Ս. Էջմիածնում, առաջին օրինակն ավարտել է 1893–1894 թվականներին, իսկ 1900 թ. ստեղծել յուղաներկ տարբերակը: Սուրենյանցի համար դրանք բնորդ ծառայել են իր մոտիկներն ու հարազատները. Քրիստոն նկարված է նրա ընկերոց բանաստեղծ Ա. Ծատուրյանի կերպարանքից (հայ ժողովրդի ազգային աղետի շրջանում՝ 1915 թ. Ալեքսանդր Ծատուրյանի դիմանկարն է լրձնել նաև Մարտիրոս Սայահնը, որտեղ առաջին անգամ տեսնում ենք սև գույնի գերականությունն): Իսկ «Եկայը առ իս...»-ի աջ երկու առաջալները, որոնք կիսով չափ երևում են Ս. Էջմիածնի Սայր տաճարի բեմի ետևից, ինընանկար են: Այսինքն կրոնական թեման Սուրենյանցի պատկերում գտնել է հստակորեն՝ աշխարհիկ նեկանարմություն:

ու արդարություն են հայցում, ճիշտ է՝ երկնքից, բայց այնուամենայնիվ, նրանք սպասում և հավատում են այդ փրկությանը: Նկարն ավետարանական թեմա լինելով հանդերձ, նախ և առաջ ներկայացնում էր բազմից խարված ու խոշտանգված հայ ժողովրդի վիճակն Արևմտյան Հայաստանում՝ սուլթան Համբիլի բռնապետության օրոք:

Հարազատ ժողովրդի վշտերով ու տառապանքներով ապրող և հուզվող արվեստագետը իր ստեղծագործություններում բազմից պատկերել է հայ որրուկների, անսուն գաղթականների ողբերգական կյանքը: Վերջինիս արտացոլումն է «Լքյալը» կտավը (1894), որը պատմում է համիլյան կոտորածների օրերին հազարավոր անօթևան ու հուսահատության մատնված որբերի մասին: Եկեղեցու փակ դրան առջև պատկերված փոքրիկ աղջկա գիշահակ կերպարը գեղարվեստական մեծ ընդհանրացումներով արտահայտում է Հայոց ցեղասպանության ողջ էությունը: Արտահայտչական բոլոր միջոցներն ուղղված են պատկերի գաղափարի առավելագույնս բացահայտմանը: Նկարի մեջ կարևորագույն տեղը հատկացված է Եկեղեցու դրան շրեղ հարդարանքին: Այստեղ գեղագետ Սուրենյանցի, ինչպես նաև՝ միջավայրի համար, դեռևս չկա «գաղթական» հասկացության ողբերգականության և հայ ժողովրդի լայն գանգվածների հետ նրա կապի խոր ընբանումը:



Վ. Սուրենյանց, Ոտնահարված սրբություն, 1895



Վ. Սուրենյանց, Զարդից հետո, 1895

Սուրենյանցը, բացի այն, որ իր գործերում համես է գալիս որպես ճարտարապետական միջավայրի, զարդարանդակների, փորագրական նախշահյուս մոտիվների փաստագրող, նաև՝ քարե, փայտե կերպընկալ մակերեսի վրա կարողանում է դրոշմել իրեն տանջող միտքը՝ նրա ճշացող ծալքերի մեջ չքացնելով մեր էությունից պոլիված տիեզերական գաղտնիքը: Մանրամասների հանդեպ սերը ուներ իր արդարացված նպատակը, քանզի դրանք (դրները, խաչքարերը, գորգերը, փորագրված հարթ մակերեսները) օգնում էին նկարչին հավասարակշռության օրենքների պարտադրությամբ տարածական միջավայր կառուցելուն՝ իրքն գերագույն նշան մի նոր աշխարհզգացումի:

Սուրենյանցի ստեղծագործությունն աչքի է ընկնում ընդհանրացման մեծ

ուժով, բայց և մանրամասների հմուտ ու նուրբ մշակմամբ: Ուսկերչի հմտությամբ կատարված մանրամասները գալիս են շեշտելու հիմնականը, ընդգծելու կերպարների խոր հոգեբանությունը, ստեղծելու յուրահասուկ մքննորդը:



## Վ. Սուրենյանց, Գաղթական աղջիկ, 1915



Գաղթական. 1915 (լուսանկար՝ Վ.Սուրենյանցի)

Փիլիսոփայական այլ եզրակացության է հանգում նկարիչը «Ոտնահարված սրբություն» (1895)<sup>3</sup> ստեղծագործությունում, որտեղ Սուրենյանցը գեղարվեստական ցնցող պատկերների միջոցով ցույց է տալիս, որ եկեղեցին, կրոնն անուժ են պահպանելու ժողովրդին ահեղ փորձությունից: Այս պատկերը միայն 1894—1896 թթ. համիլյան ջարդերի գեղարվեստական սեռակումը չէ, այլ հայ ժողովրդի՝ տևական ներկա դարձած պատմական ճակատագիրն արտացոլող մեծ կտավ: Ելներով հայկական արժեքների ավերման և ամսեն ժողովրդի կոտորածների՝ դարեր շարունակված փաստից, Սուրենյանցն իր կտավում հասնում է խոր ընդհանրացման: Դարավոր եկեղեցու քարակոփ սալահատակի և որմերի խորքի վրա պատկերված է մի ամբողջ ողբերգություն. սպանված է քահանան, կողոպտված է եկեղեցական գանձանակը, պոլկած է վարագույրը, գետնին են բափկած հանգած մոմերն ու բուրգառը: Խակ առաջնապատկերում խառնիխուտուն ընկած են հնավանդ մատյանները: Դարավոր ինքնատիպ մշակույթի կնիքը կրող գեղեցիկի միջավայրում կատարված սպանությունն ու կողոպուտը պատկերում են միտք ու գեղարվեստ արարող ժողովրդին և նրա թշնամիներին, որոնք ոտնահարել են իմաստության խորհրդանիշ հանդիսացող

3 1890-ական թթ. հյայկական կոտորածների դեմ հայ մյուս առաջադիմ մնավիրականների հետ միասին իր բողոքի ձայնն է բարձրացրել նաև Հովհաննես Այվազովսկին: Նա ճգոտում էր նաև իր միջոցներու ու ուժերու տրամադրել ջարդերից ազատվածների ծովածավալ ցավերն ամորելու համար: Այդ նպատակով մեծանուն ծովանակարիչը նախ՝ տրամադրեց Ղրիմում ունեցած իր բնակելի կալվածքների մի մասը՝ Թուրքիայից հետաք անապատառ գարաբականներին պատուապերել համար և վաճառքի նյութ թարձեց քաղաքարքի Ակսակեր ի հասարա բուրժուական արքանակիրից ապաստվածների: Այդ ստեղծագործություններից են «Դայերին թուրքերը բարձուն են նավերի վրա», «Կենանան հայերին թուրքերը նետուն են Մարճարա ծովը», «Դայերի ջարդը Տրավիդունում 1895 թ.»: Կերպիններու, ինչպես նաև Սուլեյմանից մի շարք օճագորեր, Վերարտադրովիլը, տպագրվեցին «Եղբայական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» գրական ժողովածուում: Տես Բրատская помоцъ пострадавшим в Турции армянам, М., 1897, с. III, IV, 75, 81, 97, 501:

գրքերը: Շարունակաբար կրկնվող ջարդերի, հայրենի երկրի ավերման ու թալանի շուրջը ծագած նկարչի դատողությունները գութ շարժող աղերսանքներ չեն: Գետնին նետված, պատառութված մագաղաքյա գրքերը չի կարող պղծել ոչ մի բարբարությունը: Դրանք հավերժական գաղափարով են պարուրված:

Բայց նույնիսկ այսօրինակ ողբերգության էությունն արտահայտելիս Սուրենյանցը մնում է գեղագետ. իրերը՝ կիրառական արվեստի ստեղծագործությունները, ինչպես նաև ճարտարապետական մանրամասները հանդես են գալիս իրենց ողջ շրեղությամբ՝ ցուցադրելով հայոց հոգևոր ու նյութական մշակույթի գեղագիտական կատարելությունը:



Վ. Սուրենյանց, Գաղթականներ, 1915



Գաղթականներ. 1915 (լուսանկար՝ Վ. Սուրենյանցի<sup>4</sup>)

Չուսպ, բայց ազդեցիկ է կտավի գունային լուծումը: Նկարիչը մքնողորտի մերմ ու շղարշային թափանցիկության մեջ է խորասուզել ճարտարապետական քարակերտ զարդարանքների շրջագծային կարծրությունները: Եթե պատկերի ձախակողմյան վերնամասում, լուսաստվերի միջոցով խորհրդավորության պատրանք է ստեղծված, ապա գետնին թափված գրքերը կարծես մերկ են՝ սպիտակավուն սալահատակի սառը մակերեսի վրա, և իրենց այդ անբնական, սրտամորնոք վիճակով առավելագույն լարման են հասցնում նկարի զգայական ընկալումը: Եվ հենց այստեղ է պատկերի բովանդակության կիզակետը: Ուժնահարված են դարերով սրբազործված այն գրքերը, որոնց փրկության համար հայ մարդը երթեմն պատրաստ է եղել ինքնազոհության: Իմաստության շտեմարան, նկարազարդ ու խազագիր, բայց անօգնական ու պատառութված մատյաններն այստեղ խորհրդանշում են հայ ժողովրդի հազարամյա մշակույթը, որի գանձերը կործանվում են պատմական իրավիճակի բիրու հարկադրանքով: Ըստ այդմ՝ նկարիչն ընդգծում է ոչ թե ժողովրդի խոցված մարմինը (սպանված քահանա), ոչ թե նրա թշվառությունը (դատարկ գանձանակ), այլ վիրավորված ու խոշտանգված հոգին՝ ոտնահարված գրքերը: Հնադարյան մագաղաքները, այրվող գրքերը, կողովատված տաճարի դատարկ պատերը լուր աղաղակում են այն քստմնելի ցեղասպանության մասին, որին արժանացավ այդ մասունքները

4 Լուսանկարները պահպում են Յայաստանի Ազգային պատկերասրահի Յուշա-ձեռագրային բաժնի Վ. Սուրենյանցի ֆոնդում, N 128, ինվ. N 600(2):

ստեղծող մի ամբողջ ժողովուրդ: Ուստի, Սուրենյանցի նկարն իր խորագիրն ընդունին հուշում է այն եզրակացությունը, որ որքան էլ ավերումներ գործեն պատմության չափությունը, նրանք անկարող են ոչնչացնել հարուստ մշակույթի տեր մի ամբողջ ժողովուրդ: թեև թալանված տաճարի ներսում մահն է տարածվել, բայց դուրս՝ աշխարհում, լույս կա և լույսի հետ՝ կյամբ:



Վ. Սուրենյանց. Չայ գաղթական, 1915



Վ. Սուրենյանց. Պետրոգրադ հայերին, 1916

Սուրենյանցի նկարը հայ ժողովուրդի ապրած ողբերգության գեղարվեստական խոսուն մեկնարանությունն է: Ընդ որում, նրա ժամանակային շրջանակները շատ ավելի ընդարձակ են: Քանզի սույն պատկերը միայն ողբ չէ: Նկարում դեռ կանգուն է հայոց եկեղեցին, անեղծ է քանդակագրդ խաչքարը, իսկ որմնասյան վրա եղած դիմահայաց սրբապատկերը կարծես համբերության ու տոկունության կոչ է անում: Հայ ճարտարապետության ավանդական կորողայնությունը կտավում մի նոր հնչեղություն է ստանում, դառնում է քարեղեն ոգի: Սուրենյանցի մեծությունն է, որ պատկերի մեջ կարողացել է բյուրեղացնել և կոտորածի կակիծը, և՛ ոտնահարված սրբության նորմոքը, և՛ հայ ժողովուրդի անընկելիության ու հավերժության գաղափարը:

Իր «Լքյալը» և «Ոտնահարված սրբություն» երկերի հղացման շրջանում (1893 – 1895թթ.) Սուրենյանցը գտնվում էր Ս.Էջմիածնում, ուր ազգային հին ու նոր հիշատակները նկարչի գիտակցության մեջ վերարձարձվել, թարմացել էին: Նա իր հոգու խորքում բուռն զգացումով վերապրել էր այդ տարիներին հայ անզեն ժողովուրդի հանդեպ սուլթանական հորդաների ծեղքով կատարված անլուր ոճրագրծությունների աղիղորդմ արձագանքները:

Սուրենյանցը իր մի շարք ստեղծագործություններում, ինչպես՝ «Լքյալը» և «Ոտնահարված սրբություն», «Զարդից հետո» կամ «Չամիրամն Արա Գեղեցիկի դիակի մոտ» հարազատ ժողովուրդի կյանքից վերցված թեմաներին փորձում է մոտենալ շեքսափիրյան<sup>5</sup> ոգուն հատուկ զգացումով: Զգողական մի ներքին ուժ

5 Շեքսափիրի հայ բազմաթիվ թարգմանիչների մեջ, Չովհաննես Մասեհյանից բացի, մեծ ողբերգակի գործերը խորապես ուսումնասիրել և նրանցից մի քանից հայերեն է թարգմանել հենց ինքը՝ Վարդգես Սուրենյանցը, թողմելով թարգմանական հարուստ ժառանգություն հինգ սոմետ և վեց պիես:

կապում, միացնում է նկարչի մոտ առկա դրամատիկ զգացմունքների այս երկու գորեղ հոսանքները. մեկը գալիս է համաշխարհային գրականության ամենաբարձր գագաթների՝ շերսպիրյան երկերի հետ սերտ հաղորդակցությունից, իսկ մյուսը՝ հայ առասպելական դյուցազնավեպերից ու մանավանդ՝ իր տեսած ողբերգական դեպքերը ներքնապես վերապրելուց:

Ուստի պատահական չէ, որ եղերական 1915 թվականին<sup>6</sup> ևս նկարչի ստեղծագործությունների միակ հերոսներն են դառնում հայ որբերն ու գաղթականները: Եղեռնի օրերին, կոտորածի ու գաղթի անմիջական տպավորության տակ, Սուրենյանցը գալիս է Էջմիածին և միարան, անվանի հայագետն ու մեծ հայրենասեր Գարեգին Հովսեփյանի<sup>7</sup> հետ անում ամեն ինչ՝ դժբախտ գաղթականների հոգսերը թերևացնելու համար: Նա որբերին ու գաղթականներին նկարում է Էջմիածնում, Երևանում, Աշտարակում, Օշականում, որտեղ մասնակցում էր դպրոցների բացմանը, ծանոթանում է նրանց կենցաղին, սովորություններին: Իր «Շամփորդական տպավորություններում»<sup>8</sup> Սուրենյանցը ուշագրավ նշումներ է արել հայ գաղթականների կենսափրառական, օրինավոր բարքերի, աղքատիկ կենցաղի ու կրած զրկանքների վերաբերյալ: Նկարիչը հիմնում էր նրանց կյանքի իմաստնությամբ ու հոգեկան գեղեցկությամբ, ինչպես ինքն էր գրում «քարեկազմ, շնորհագեղ» արտաքինով, նրանց մեծ ճաշակով ու գոյնների խոր, բնական զգացողությամբ: Դրանք ոտարորիկ, պատառուտված զգեստներով կանայք ու տղամարդիկ են Արևմտյան Հայաստանից, անողոք ճակատագրից մի կերպ մազապուրծ եղած: Տեմպերայով, գուաշով, մասամբ նաև մատիտով ստեղծված այս նկարներում Սուրենյանցը հիմնում է վտարանդիների<sup>9</sup> հոգեկան բարձր կարողությամբ, ներքին ուժով, բարությամբ, անսահաման

6 Մարտիրոս Սարյանը 1915 թ. իր հուշերում գրում էր. «Հաստատվեցի Էջմիածնում, Սուրբ Հռիփսիմենի սենյակներից մեկում, որ տրամադրեց ինձ Գարեգին Շովսեփյանը: Երեկոյան դեմ, մթնաղին, տարածվում էր նաևվան հեծենաքի տիսուր երգ մարդկային հսկայական ծովի վրայով մինչև ծեր Արարատը՝ մեկ բարձրածայր, մեկ խանալուկ, մեկ հեռանալուկ ու կորցելով մթամած հովտի տաղնապահը խութերում: Միայն գիշերվա ժամերին մի փոքր հանդարտուում էին հասանաները, մեռնդների վայոցը ցավագին ծիչը: Իսկ լուսադնեմ գերեզմանային զարիւրենի մի հանդարտուում էր երերում իր հետ: Կարծու մահը լափում էր օրվա իր հասանելիքը և քուն մտնում: ... Ասպա զարիւրենի մահվան այդ պարզ ծավագիւց, իր մեջ առավ Արարատը ու պատեց խավարուց: Միայն ճերմակ գագարն էր, որ մերը ընդ մեր հանգչող մոնի պես կետվետում էր քանձն սկության օվկիանոսում»: Տես «Սովետական արվեստ», 1965 թ., N 4, էջ 28:

7 Այս տարիներին Սարտիրոս Սարյանը Գարեգին Շովսեփյանին գրում էր. «... Յայ գիտի Էջմիածին, երանի թէ չիշվանդանայի ու մասի Զեզ մոտ: Ինչքան նա աշխատած կլինեն: Կաքեմ որ այդ ոերը կտարուուն է Վարդգեսը: Շատ ուրախանը, իմանալով Զեզ ճենանարկությունը նյուր է հավաքել զարդարական վերաբերյալ բանգարանի համար, և շատ են ափսոսում, որ ես այդ գործուն օգտակար չեղա...» (Ծահեն Խաչատրյան, Մարտիրոս Սարյան, Եր., 2009, էջ 45):

8 Տես Վարդգես Ըսրենյանը, «Արմենիական արքաներ», Մ., 1917, N 9, 26 փետրալի, էջ 19-20:

9 Յայ գաղթականների մասին հուշեր են պահպանվել նաև նկարիչ Արշակ Ֆերվաճյանի նորերում. «Զգիտեմ, թէ ի՞նչ լեզվով, ո՞ր ձայնու պիտի ասեմ, կրնելի հազար անգամ ծանրուկած «ժողովուրդը կոտորվում է» ահագոյզը, ո՞ր վրձինով նկարել էջմիածին և ճենարանի բակերում ու պատերի տակ վեց ամսից ի վեր բանադր հոգեվարդով անհետացող հազարավոր ամբողջ թշվաների: Վեց ամսի բաց երկնքի տակ անապատությունից էլ ճիշվադ կերպարանը ընդունած ուրվականներ, որոնք թուր էլ չընտեն կուլ տալու, և որոնց այժմ էլ ցուրտը խօնել է մեկ մեկի վրա կանքի ու ճենարանի հարավից զանազան անողութ ու անպատուհան «խանինարարաններում», ուր նորա մեռնում են, վերջապես: Շատերը չունին էլ ոչ մի մերձավոր, բայց իրենց հարևանը և նմանները, որ դուրս բերում են մահացածների դիակները, թողնում պատի տակ, անցուդարձի, դրների առաջ, ճանապարհին վրա, որ մնում են նորա սատկածի դրության մեջ օրերով: Քաղաքի չափ կարևորություն ստացած Աշտարակը, որ քչում է խեղճերին դեպի Օշական, Օշական նոյնչափ փութեռանդությամբ Կաղարշապատ, ուր, հարստացած, ունկորությունների տեր դարձած հազար հայերը, հացով, դոշարով, գիմնիվ և այլ Աստծո բոլոր բարիններով լիացած, կուշտ ու կուտ, չեն կ նայում, թէ ինչպես մերկ բաղդածները փողոցով անցնելով մեկ մեկ կանգ են առնում ու թոնից նոր դուրս բերած լավաշի այս մեջ ծավալվող անուշափությունը վայելելու համար պինչերն ու

լավատեսությամբ, բայց ինքը ևս ծանր է ապրում ժողովրդին հասած դժբախտությունը: Էտյուդներում Շատախից, Աջևազից, Վասպուրականից, Կարինից, Սասոնից և այլ տեղերից գաղթած ոտարորիկ, պատառոտված զգեստներով տղամարդիկ, կանայք ու երեխաները ներկայանում են բարեհոգի ժամանակ, արժանապատվորյան գիտակցությամբ: Եվ նրանց կենդանի դիմագծերում նկարիչը տեսնում է հարազատ ժողովրդի վերածնության հավատը: 1915 թ. գաղթականների ու որբերի ստվար պատկերաշարում և նրանց պատկերող լուսանկարներում<sup>10</sup> չկա մահը, չկա անհուսության դուռն ընկած մարդը, այլ կան եղենից փրկված հայեր:

Նկարիչը կարևորություն էր տալիս իր ապագա ստեղծագործությունների համար նյութեր հավաքելուն և որպես այդպիսին՝ իիշյալ շարքը նրան լուրջ ծառայություն կարող էր մատուցել: Այս գծանկարների ու ճեպանկարների նպատակը մի նոր թեմատիկ նյութի ընտրությունն էր, ու թեև դրանք խոչոր կտավների չվերածվեցին, սակայն անգնահատելի արժեք են ներկայացնում ինչպես գեղարվեստական, այնպես էլ պատմափաստագրական առունով:

Մոտ 40-ի հասնող այդ էտյուդներում<sup>11</sup> Սուրենյանցը գեղարվեստական յուրօինակությամբ, ազգագրագետի բարեխնդությամբ պահպանել է մայր ժողովրդի ինքնատիպ մասունքները, գունագեղ տարագների տեսքն ու գեղանկարչական հմայքը՝ նրանց կրող տիպերի և անհատականությունների միասնության մեջ: Էջմիածնում հավարքած գաղթականությունն նույնիսկ իր այդ ողբայի վիճակում տարագների գունագեղությամբ, ինքնատիպությամբ ու բազմազանությամբ նկարչին ավելի խորն էր զգացնել տալիս տաղանդավոր մի ժողովրդի ապրած վիշտը, որը, բողոք հայրենի եղերքը, իր հետ բերել էր նրա բույրի ու հմայքի մի չնշին բեկորը միայն: Պատահական չէ, որ այդ տարիներին գաղթականներին նվիրված ճանապարհորդական նորերից մեկը նկարիչը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Գեղեցիկի որոնումը պատության իրավունք է տալիս: Գեղեցիկը հավերժական է, և բախտավոր է այն ժողովուրդը, որը դրա պահանջը գոում է. նա կազատի»<sup>12</sup>:

Վարդգես Սուրենյանցի տեսած Հայաստանը եղել է 1915 – 1916 թվականների Էջմիածնը, վաճիքի շրջակայքը, թուրքական յարադանից փախած հազարավոր գաղթականներով ու որբերով հեղեղված, մի խոսքով՝ «որի և որի հայրենիքը»:

Հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված հարցերը միշտ էլ եղել են Սուրենյանցի մտորումների առարկան: Այդ մասին է վկայում նաև Երվանդ

աշքերը մեծ- մեծ բացած դես ու դեն են նայում ու արցունքն աղմուկով սրբում»: Տե՛ս Արշակ Ֆերվաճյան, ի խորոց սրտի, «Զանգ», լրագիր, Եր., 1919 թ. 19 հունվարի, N 8, էջ 3-4:

10 Տե՛ս Հայաստանի ազգային պատկերասրահ, Հուշադեռագրային բաժին, Վ. Սուրենյանցի ֆոնդ, N 128, ինվ. N 602 (6):

11 Սուրենյանցի այս էտյուդների ցուցահանդեսը բացվեց 1916 թվականի դեկտեմբերին՝ Պետրոգրադում: Վերոհիշյալ նկարչաշարի մեծ մասը ցուցահանդեսներից գնել ու տեղի հայության էր նվիրաբերել նավարդյունաբերող Ծառուրովը: Տե՛ս «Արմանական պատկերասրահ», 1917, N 1, էջ 21: Այդ մասին հետաքրքիր տեղենություններ է հայորդում հայ գրող, բարգմանից Կարա-Դարսիշը (Յակոբ Գենցյան) 1916 թ. Թիֆլիսից Սովորական ուղարկած իր թրակցության մեջ: Տե՛ս Կարա - Դարսիշ, Վ. Սուրենյանց, «Արմանական պատկերասրահ», Մոսկվա, 1916, N 20, էջ 23 - 24. Դանիելի նոյն և հաջորդ (21) համարներում վերատպված են Վարդգես Սուրենյանցի «Դերք կանգնած փախստականները» (էջ 11) և «Սի խումբ հայ գաղթականներ» (էջ 1) նախոտանկարները:

12 Տե՛ս Վարդգես Սուրենյանց, Պուտեվայ վեպատկերություն, «Արմանական պատկերասրահ», 1917, N 9, 26 փետրագում, էջ 19-20.

Շահագիզի հուշերում պահպանված՝ նկարչին վերագրվող հետևյալ խոսքը. «Ես շատ եմ քափառել օտար հորիզոններում, տառապել եմ, հոգնել: Հավերժ քննություն, արդյո՞ք մի օր լույս աստղ կծագի մեր հարազատ երկրում, որ կարողանանք խաղաղ, անդորր մեր հացով ու ջրով ապրել, մեր մաքուր օդը շնչել, մեր հոյցերով հիանալ, մեր տառապանքին արդյոք վերջ կլինի»:<sup>13</sup>

Հայ առաջավոր մտավորականության լավագույն ներկայացուցիչների հետ միասին նկարիչը հավատում էր իր ժողովրդի ազատագրմանն ու վերածննդին: Դա էր Սուրենյանց-արվեստագետի երազանքը, որի կարճատև իրականացումից քիչ անց՝ 1921 թվականի ապրիլի 6-ին Յալթայում, վրձինը ձեռքին, նա անժամանակ ու անակնկալ ավարտեց իր կյանքի ուղին:

Վարդգես Սուրենյանցի ստեղծագործությունների մեջ ամենից ավելի վառ արտահայտությունը գտան նոր ժամանակների հայկական կերպարվեստի տարբեր կողմերն ու փուլերը և որպես կենդանի ժառանգություն՝ հասան ժամանակագրական այն կետին, որտեղից իր ընթացքը սկսեց խորհրդահայ կերպարվեստը:

## Summary

*Shushanik G. Zohrabyan*

### THE ART WORKS OF VARDGES SURENYANTS IN RESPONSE TO THE ARMENIAN GENOCIDE

The importance of the art works of Vardges Surenyants is stressed especially by the fact that the painter being a contemporary of the Armenian Genocide of 1894-1896 and then 1915 has left for future generations many valuable pictures, drawings and photos reflecting the greatest tragedy of the Armenian people. They have great art and historic-documentary value. The Hamidian cruel massacres of 1894-1896 are depicted in the Surenyants paintings “Deserted” (1894), “Violated holiness” (1895), “After the massacre” (1895), “Come to me all well-deserved” and the paintings depicting Armenian refugees.

During the Armenian Genocide of 1915 Surenyants came to St.Etchmiadzin and together with great patriot Garegin Hovsepian did his best to ease the refugees' lot. At the same time he painted orphans and refugees in Etchmiadzin, Yerevan, Ashtarak, Oshakan where he took part in the opening of schools, got acquainted with everyday life of refugees. Barefooted men, women and children from Shatakh, Aljevazi, Vaspurakan, Karin, Sasun and Western Armenia's other places in torn clothes but with smiles on their faces and deep consciousness of dignity are painted in his pictures. Gathered in Etchmiadzin refugees in colourful national costumes by their individuality and variety made the painter feel deeper the grief suffered by the people, who left native regions and brought with them a fragment of the lost Motherland's fragrance and charms.

13 Մ. Ղազարյան, Քայրենասեր մեծ նկարիչը, «Գրական թերթ», Եր., 1960, 10 հունիսի, N 24, էջ 3: